ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
«ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

ՀՀ Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 3-54-34

Ե- 46 28.09.2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՁ ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Որոշման համար հիմք հանդիսացող փաստերը

Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն ՀՈԱԿ-ի և ԱՁ Աննա Խաչատրյանի միջև 2023 թվականի հունվարի 5-ին կնքված ԱԲՀԿՏ-ԳՀԾՁԲ-23/03 ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ <<Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Աբովյան համայնքի Մայակովսկի, Պտղնի բնակավայրերի աղբի փոխադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների >>:

Կնքված պայմանագրով նախատեսված ծառայությունը Կատարողի կողմից մատուցվել է Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ծառայության մատուցման որակի խախտմամբ և դադարացվել է մատուցվել 2023 թվականի օգոստոսի 10-ից ԱՁ Աննա Խաչատրյանի կողմից:

2023 թվականի օգոստոսի 18-ին Ե-37 և 2023 թվականի սեպտեմբերի 4-ի Ե-39 Ծանուցումներով տեղեկացրել ենք ԱՁ Աննա Խաչատրյանին պայմանագրային պարտավորությունները չկատարելու մասին՝ ակնկալելով Կատարողի կողմից հետագա

գործողություններ պայմանագիրը լիակատար իրականացնելու ուղղությամբ, սակայն դրանց պահանջները չեն կատարվել:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի պահանջներով՝ Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն ՀՈԱԿ-ը Ծանուցմամբ հրաժարվել է ԱՁ ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ հետ 2023 թվականի հունվարի 5-ին կնքված ԱԲՀԿՏ-ԳՀԾՁԲ-23/03 ծածկագրով կնքված գնման պայմանագրից և միակողմանի լուծել է ԱԲՀԿՏ-ԳՀԾՁԲ-23/03 ծածկագրով պայմանագիրը, որը հրապարակվել է 2023 թվականին սեպտեմբերի 18-ին www.gnumner.am կայքում:

2 Որոշումն ընդունելու հիմնավորումը

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն .<< Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: >>

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, նույն հոդվածի 2-րդ մասի դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. ԱՁ ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ներքոհիշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, ԱՁ ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:
Առդիր 1 նիշք՝

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ _____ Է. ՍԱՐԴԱՐՅԱՆ

Մասնակցի						
Անվանում	ՀՎՀՀ, Ֆիզ անձի դեպքում ՀԾՀ	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնացելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակից հրաժարվել է կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
ԱՋ ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ	43175389	Կոտայքի մարզ, Մայակովսկի, 10-րդ փողոց 14 տուն	-	V	-	28.09.2023 թ ԱԲՀԿՏ-ԳՀՇՁԲ-23/03

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ _____ Է. ՍԱՐԴԱՐՅԱՆ